

տեղադրանութեան արգասիքը աւելի զգալի կերպով իմանան : I սնտրայի ուսումնական ընկերութիւնը 1769ին Հուտսընի ծոցին վրայ եղած Ուէյլի իշխանին բերդը , Ղայիդի կղզին և հարաւային ծովուն մէջտեղումները երևելի աստեղաբաշխներ ղրկեց . Շափ՝ Ռալիֆոունիա գնաց , Հէլլ՝ Սարգհուս որ I ափոնիոյ հիւսիսային ծայրը կ'իյնայ , Փլաւման՝ Վայանէպուրկ ֆինլանտիոյ մէջ , ուրիշ աստեղաբաշխներ ալ աշխարհքիս այլ և այլ կողմերը , որոնք իրենց նախանձելի պաշտօնը յաջողութեամբ գլուխ հանելէն ետև անգին ու ճոխ աւարաւ իրենց հայրենիքը դարձան , որոնց դիտողութիւններովն իմացուեցաւ որ արևուն ճշմարիտ տեղադրանութիւնն է 8", 6 : Սերջէն I սքէ երևելի աստեղաբաշխը մեծ խնամքով այս ամէն դիտողութիւնները հաշուեց ըստ նոր տարերաց մոլորակաց , և այս երկու անցքերէս վերջապէս հետևեցուց թէ արևուն հասարակածին վրայ և երկրիս նկատմամբ իրեն միջին հեռւորութեանը ժամանակ իր հորիզոնական տեղադրանութիւնն է 8", 5776 . ուսկից կը հետևի թէ արևուն երկրէս ունեցած հեռւորութիւնն է 82,667,200 աշխարհագրական մղոն :

(ՄԱՅԱԾՆ ՈՒՐԻՇ ԱՅԳԱՄ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Լէւոն-Է Գաղախոյնի իրաւացի Վրայ Ըրած Դաբաս-բան :

Հին շինուածքները , քաղաքները , ծովերը Իտալիոյ հարթին են , մեծամեծ մարդիկը իրեն հոգին են : Նախախնամութեան մասնաւոր խնամքը , ամենայն մեծամեծ գործոց մէջ Իտալիա առաջին նշանը տուեր է և արդի քաղաքականութեան օրինակը եղեր է :

Առաջին մեծ քնարերգակ բանաստեղծը Իտալացի է . Փեդրարքա :

Առաջին արդի դիւցազներգակ բանաստեղծը Իտալացի է . Տանդէ :

Աշխարհքիս առաջին արձանագործը Իտալացի է . Միքէլանճելոյ :

Աշխարհքիս առաջին պատկերահանը Իտալացի է . Ռաֆայէլ :

Առաջինը որ իմաստասիրութիւնը պատմութեան մերձեցուց Իտալացի է . Վիքոյ :

Միջին դարու առաջին քաջ քաղաքագէտը Իտալացի է . Մաքքիավելլոյ :

Աշխարհքիս առաջին վիպասանը Իտալացի է . Պոքքաչչիոյ :

Առաջին կատակերգակ հոմերոսը Իտալացի է . Արիոստոյ :

Աշխարհքիս առաջին մարտիկը Իտալացի է . Նափոլէոն :

Հանձարոյն սաճարին մէջ ամէն մէկ գրան սեմին վրայ Իտալիոյ որդի մը կանգուն կը տեսնէք :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Անշուշտոյ պարգոն-Էտան արգոն-Էտան Երեմի :

Վերջի տարիներս Ինկիլթեռայի մէջ հրաշալի օրինակ մը ընծայուեցաւ տապաքութեան արագութեանը վերաբերեալ : Տպելու գործքը Տամպերկէրի Ափրիկէի մէջ ըրած ճամբորդութիւններն էր : Ասոր գերմաներէն բնագիր հասորը չորեքշաբթի օր մը առաւօտեան տաւանդէկին տպագրին ձեռքն հասաւ . կէսօրունէ առաջ վեց քաջ թարգմանչաց մէջ բաժնուեցաւ երսուսուվեց թերթ բնագիրը . ժամը մէկէն առաջ հասորին մէջ գրուելու իրեք պատկերքն ու աշխարհացոյց տախտակը փորագրողներու ձեռքն էր . ժամը վեցին անգղիական թարգմանութեան սկզբնաւորութիւնը տապաքողին բոլն էր , անկէց ետև քսան արկղ գրերու սկսան նոյն օրինակն շարագրել . հինգշաբթի տապաքութիւններն ու փորագրութիւնները սրբադրուելու անցան . ուրբաթ պատկերները մանրանկարի արուեսցան որ ներկէ . ուրբաթ օրը ժամը երկուքին քառասներորդ չորրորդ կամ վերջին թերթը մամլոյն մէջ տպուելու հետ էր . ժամը ութին բոլոր գործքը չորսալու գրուած էր . նոյն օրը տասուերկու էջ քննաբանական յառաջաբան մը շինեց թարգմանիչներէն մէկը . շարաթ ժամը երկուքին գիրք կազմող աղջկունք թերթերը կարած ու հատորները կազմած էին . երկուքուկէսին գրածախները ասդիս անդին սկսան ուղարկել . նոյն իրիկունը վեցուկէսին տապաքողին բոլը օրինակ մ'ալ չէր մնայեր :

ՀԱՆԵԼՈՒԿ

Չերի խաչափար ոտուի ունի ,
Ընդ որ երթայ , հետ երևի ,
Նա 'ի մազէ կարմունջ անցնի ,
Թէ և թնթայ հող ոչ թափի :